

ՍԵՐՕ ԽԱՆՉԱԴԵԱՆԻ «ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ» ՎԷՊԸ

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱԻԵԱՆ

բ.գ.դ., Խ. Աբովեանի ան. ՀՊՄՀ Վ.Պարտիզունու ան. Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի Պրոֆեսոր

Բանալի բառեր - զօրավար, գործիչ, նամակ, փաստաթուղթ, Սպարտա, պատերազմ, Արցախ:

Ключевые слова: полководец, деятель, письмо, документ, Спарта, война, Арцах.

Key words: general, politician, letter, document, Sparta, war, Artsakh.

1993 թուականին, երբ Արցախեան հերոսամարտի ամենածանր շրջանն էր, Ս. Խանզադեանը գրեց «Գարեգին Նժդեհ» վէպը՝ առաջին անգամ վիպականացնելով տաղանդաւոր զօրավարի, քաղաքական գործչի, մտաւորականի կերպարը, որը խորհրդային տարիներին գտնուում էր եօթ փակի տակ:

Ահա ինչպէս է ներկայացնում «Հայկական սովետական հանրագիտարան»-ը Գարեգին Նժդեհին. «1920 թ. Մայիսին իր զօրամասերով ճնշել է Զանգեզուրի աշխատաւորութեան ապստամբութիւնը, 1920-ի Յուլիս-Օգոստոսին կռուել թուրքական յարձակումը կանխելու նպատակով Զանգեզուր, Ղարաբաղ եւ Նախիջեան մտած կարմիր բանակի զօրամասերի դէմ: Եղել է դաշնակցութեան՝ 1921-ի փետրուարեան խռովութեան եռանդուն կազմակերպիչներից, այսպէս կոչուած Լեռնահայաստանի Հանրապետութեան դիկտատոր, Զանգեզուրի ազատագրումից (1921-ի Յունիս-Յուլիս) յետոյ փախել է արտասահման, շարունակել հակասովետական պայքարը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ համագործակցել է գերմանական ֆաշիստների հետ, դարձել Բեռլինում հիմնադրուած (1924) «Հայկական ազգային խորհրդի» անդամ: 1944-ին ձերբակալուել է եւ յանձնուել սովետական դատարանին»¹:

¹ «Հայկական Սովետական հանրագիտարան», հ. 8, Եր., 1982, էջ 269:

Ուշադրություն դարձնենք «1920-ի Յուլիս-Օգոստոսին կոուել է թուրքական յարձակումը կանխելու նպատակով Զանգեզուր, Ղարաբաղ եւ Նախիջեան մտած կարմիր բանակի զօրամասերի դէմ» տողերին. կանխելու՞, թէ՞ պատմական Հայաստանի այդ տարածքները «Ադրբեջան» յորջորջուած հանրապետութեանը բռնակցելու համար:

Այս առումով «Գարեգին Նժդեհ» վէպը ճիշդ ժամանակին ու փաստարկուած հակահարուած է այդ կեղծարարութեանն ու ադրբեջանական քարոզչամեքենայի՝ լայնօրէն տարածուող այն ցնդաբանութիւններին, թէ Զանգեզուրը, Նախիջեանը, Արցախը, այժմ՝ նաեւ Երեւանը, Սեւանն իր շրջակայքով ու այլ տարածքներ «պատմական Ադրբեջանի անբաժանելի մասն են եղել դեռեւս նախապատմական ժամանակներից»:

Վէպը խիստ արժէքաւոր է ոչ թէ գեղարուեստական (այն նկատելիօրէն զիջում է Ս. Իսանզադեանի միւս ստեղծագործութիւններին), այլ մի շարք փաստաթղթեր շրջանառութեան մէջ դնելու եւ մեծ տերութիւնների (Անգլիա, բոլշեւիկեան Ռուսաստան, Գերմանիա եւ այլն) իսկական դէմքը քողազերծելու առումով:

Ներկայացնենք այդ փաստաթղթերից մի քանիսը, որոնք ձեռք են բերուել Նժդեհի հետախոյզների կողմից: Նժդեհի սեղանին էր «կարմիր բանակի» ռուս գեներալ- լեյտենանտ Սալկեւիչի նամակը՝ «Սեկրետնօ. 4007» մակագրութեամբ. «Զանգեզուրի միացումը Ադրբեջանին կը կատարուի: Նախիջեանի հայերի ջարդից յետոյ, որ կատարեցին մեր եղբայր թուրքերը, հազիւ թէ Զանգեզուրը ոիսկ անի մեզ հակահարուած տալ՝ չունենալով իր թիկունքում պաշտպանական որեւէ ուժ: Հայերը Ղարաբաղի մարտական կորստեան հետ հաշտուել չեն կարող եւ անկասկած պիտի ձգտեն օգտագործել ամէն հնարաւորութիւն՝ կորցրածը հետ բերելու համար: Պատրաստ եղէք նոր յարձակման»²:

Կարմիր բանակի զինուորական հագուստով զգեստաւորուած թուրքական զօրքերի անմիջական մասնակցութեամբ ադրբեջանական զօրամիաւորումներն ու խուժանը պարբերաբար ասպատակում էին սահմանամերձ բնակավայրերը, աներում ու թալանում, կոտորում անպաշտպան բնակչութեանը:

² Իսանզադեան Ս., Գարեգին Նժդեհ, Եր., 1993, էջ 108:

Նժդեհը քաջատեղեակ էր ոռու բուշեիկների մտադրություններին. «Մոսկուան նորից ուրացել է մեզ՝ իր երէկուայ դաշնակցին: Իսկ երէկ, երբ մենք նրա նուիրուած զինակիցն էինք, առատ խոստումներ էր տալիս: Մոսկուան գաղտնի դաշնագիր է կնքել Հայաստանի դէմ»³:

Աւելի բացայայտ էին գործում անգլիացիները. ահա Անդրկովկասի ռազմական ուժերի հրամանատար Թոմ Թոմսոնի բանագնաց Գիբոնի ներկայացրած վերջնագիրը Նժդեհին. «Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը ադրբեջանական տարածքներ են: Դա նրանց հողն է: Հայե՛ր, կամ ընդունէք Ադրբեջանին հպատակուելու մեր պահանջը, կամ կը ջնջուէք երկրի երեսից»⁴:

Աշխարհաքաղաքական զարգացումների այդ բարդ հանգույցներում է ներկայացնում Ս. Խանզադեանը Գ. Նժդեհին: Նա Զանգեզուրը փրկեց Նախիջեանի ու Արցախի ճակատագրից՝ Ադրբեջանին բռնակցուելու համարեայ թէ արդէն իրողութեան վերածուած վտանգից:

«Գարեգին Նժդեհ» վէպում Ս. Խանզադեանը շարունակում է «Մխիթար Սպարապետ», «Խօսէք, Հայաստանի լեռներ» վէպերի, «Վեց գիշեր», «Մեռածները հրամայում են» վիպակների գաղափարական գիծը՝ քրիստոնէական հնազանդութեանը, մատաղի գառան հոգեբանութեանը հակադրելով «Ակն ընդ ական», «Ատամն ընդ ատաման»՝ սեփական ուժերին ապաւինելու, ազգովին պայքարելու կարգախօսները:

Գ. Նժդեհը Զանգեզուր (Գորիս) եկավ այնտեղից Անդրանիկի հեռանալուց յետոյ եւ առաջնահերթ համարելով ժողովրդի համախմբումն ու մարտական ոգու ամրապնդումը՝ կատարեց մի շարք բարեփոխումներ: Ուշագրաւ են սիւնեցիներին ուղղած նրա եօթ պատուիրանները, որոնք արդիական հնչեղութիւն ունեն նաեւ մեր օրերում: Զօրավարի մտասեւեռումների առանցքում ամբողջական հայրենիքի գաղափարն էր, առանց Արցախի եւ Սիւնիքի այդ ամբողջականութեան պատկերացման անհնարինութիւնը: Նրա պատուիրանները հնչում էին դպրոցներում, զօրահաւաքների ժամանակ, մասսայական միջոցառումներին,

³ Նոյն տեղում, էջ 221:

⁴ Նոյն տեղում, էջ 108:

1. «Երբեք առանց Սինիքի ու Արցախի, առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյութիւն ունենալ չի կարող:

2. Լեռների վրայ, լեռների մէջ է քո փրկութիւնը: Արդ տաճարներիդ, խաչերիդ կողքին բարձրացրու մի-մի ժայռ եւ պաշտէ, եւ երկրպագէ, որ չթուլանայ փրկարար պաշտամունքդ դէպի լեռներ:

3. Սպարտա: Քո երկիրը որպէ՛ս Սպարտա կարող է գոյութիւն ունենալ տխուր Արեւելքում: Ձգտիր, կարող ես եւ պիտի դառնաս:

4. Երբեք անզէն: Թող նախ հարեւաններիդ իրենց սրերը խոփերի եւ նիզակների օթոցների վերածեն:

5. Եւ ոչ մի ընչազուրկ քո հողի: Խեղճերի արցունքից ու թոյլերի անարիութիւնից են քանդում հայրենիքները: Բոլոր որդիները անկարօտ եւ արի:

6. Մի ժողովուրդ-մի ընտանիք: Ազգերի մէջ միայն դու իրաւունք չունես ներքուստ պառակտուելու:

7. Եղիր ուժեղ, էլի ուժեղ, միայն ուժեղ: Ժողովուրդները տէր են մնում ոչ թէ նրան, ինչ որ նրանց տրոււմ է, ինչ որ նուիրում են, այլ միայն նրան, ինչին որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում»⁵:

Միայն սեփական ուժերին ապաւինելով, համախմբուելով եւ բռունցք դառնալով է հնարաւոր հասնել ոչ միայն յաջողութիւնների, այլեւ խոշոր յաղթանակների: Իր հաւատքի տաճարում նա միշտ երկրպագել է Աստծուն եւ հայրենիքը. «Իմ հաւատքի ու պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը յատկացուած են եղել Աստծուն եւ հայրենիքին: Հայաստանն է եղել երկրաւոր սրբազնագոյնն ինձ համար: Ապրել եմ նրանով եւ միշտ պատրաստ ` տառապելու, զրհաբերուելու, մեռնելու նրա համար: Դա է իմ սրբազան ցաւը, կարօտը, ուրախութիւնը, իմ գոյութեան իմաստը, իմ անմահութիւնը, իմ գերագոյն իրաւունքն ու պարտականութիւնը»⁶:

⁵ **Նժդեհ Գ.**, Ազատ Սինիք, «Հայրենիք», 1925 Յուլիս, թիւ 9, էջ 78: Նշումն ըստ Սիմոնեան Ա., Զանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ., Եր., 2000, էջ 382):

⁶ **Նժդեհ Գ.** Կեանքը եւ գործունէութիւնը, նշխարներ, վկայութիւններ, Պէյրութ, 1968, էջ 431:

Ահա թէ ինչ է գրում Համաստեղը Գ. Նժդեհի մասին. «Հայաստանն ու հայ ժողովուրդն էին անոր հաւատքը: Հայրենասիրութեան մէջ իր ուժն ունէր, տեսակ մը պառնասական: Այնպէս կը խօսէր, որ կարծես գտած էր հայ ժողովրդի գոյութեան նախնական կաւը – այդ կաւը ցեղն էր ու ցեղի փիլիսոփայութիւնը: Մոլեգնօրէն կը հաւատար, որ հայ ժողովուրդի պահանջը այդ էութիւնն է: Եւ աւանդութիւններն են, մեր լեզուն է, մեր նախապաշարումներն են»⁷:

Գ. Նժդեհը համախմբում է Զանգեզուրի զօրական ողջ ներուժը, կարգում հազարապետներ, որոնց կերպարները նոյնպէս փորձում է վիպականացնել Ս. Խանզադեանը:

Փաստական հաւաստի տեղեկութիւնների յենքի վրայ է գրողը ներկայացնում խմբապետներ Կուռոյի, Եապոնի, Խաչատուր Տատինցեանի, Թեւան Ստեփանեանի կերպարները: Ժողովրդական այս հերոսները նոյնպէս ստալինեան բռնաճնշումների զոհեր են, ձերբակալուեցին ու որպէս «ժողովրդի թշնամիներ» գնդակահարուեցին 1937-ին: Ս. Խանզադեանի «Գարեգին Նժդեհ» վէպը ճիշդ ժամանակին եւ այսօր էլ արդիական նշանակութիւն ունեցող ստեղծագործութիւն է, եւ հարկ է, որ վերահրատարակուի (1993-ին տպագրուել է փոքրաթիւ տպաքանակով, անորակ թղթով ու ձեւաւորմամբ) ու թարգմանուի տարբեր լեզուներով:

Резюме

Роман Серо Ханзадяна “Гарегин Нжде”

М. Гилавян

В статье рассматриваются вопросы “Гарегин Нжде” с идейным содержанием романа, которые очень актуальны и в наше время.

Summary

Sero Khandzantsyan’s novel “Garegin Nghdeh”

M. Gilavyan

The article deals “Garegin Nghdeh” with the problems relating to the idea of the novel that is very actual nowadays.

⁷ **Նոյն տեղում**, էջ 433:

1918 Թ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ
ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՆԴ ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ
«ՏԱԽԸ» ՎԷՊՈՒՄ¹

ՎԱԼԵՐԻ ՓԻԼՈՅԵԱՆ

բ.գ.թ., դոցենտ, Վանաձորի Յովհ. Թումանյանի ան. Պետական
Համալսարանի գրականության ամբիոնի վարիչ

Բանալի բառեր՝ ժամանակ, պատմություն, անապարտ վէպ, հայ-թուրքական յարաբերություններ:

Ключевые слова: время, история, незавершенный роман, армяно-турецкие отношения.

Key words: time, history, incomplete novel, Armenian-Turkish relationship.

Հրանդ Մատթեոսեանը «գրողի առաքելությունը» համարում է «ժամանակը ընթերցելու լեզու ստեղծելը»²: ժամանակը կարելի է ընթերցել՝ պատմական երկ շարադրելով, պատմության տրամաբանությունը դիտարկելով կամ, որ ասելի դժուար է, քո այսօրի մէջ տեսնելով անցեալն ու լինելիքը: Իրաքանչիւր ժամանակ ու դրսետրուող կերպար անընդհատ կրկնում են նոյնական ու արքետիպային նախասկիզբը, որից ասելին կոնկրետ ժամանակն ու կոնկրետ հեղինակը չեն կարող ստեղծել: Ըստ էության՝ նոյնն է ասում Մատթեոսեանը. «Ես ազնիւ եմ համարում իրականի, վաւերականի, քո տեղի ու քո ժամանակի վրայ սեւեռուելը. սեւեռուես եւ քո տեղի եւ քո ժամանակի մէջ տեսնես բոլոր ժամանակները եւ ամբողջ աշխարհը»³:

Կայ նաեւ մի երկրորդ դիտարկում: Զուգահեռելով առաջին եւ երրորդ հանրապետությունների տազնապները՝ Մատթեոսեանը հարցազրոյցներից մէկում «կուսակցական էգոիզմը» բնորոշում է որպէս խարան «առաջին զոհի՝ Առաջին Հանրապետության վրայ»⁴: Այս տեսակէտից

¹ Այս յօդուածը տե՛ս նաեւ «Գրական թերթ», թիւ 21 (3386), 22 Յունիս, 2018, Երեւան:

² Մատթեոսեան Հր., Ես ես եմ, Եր., «Ոսկան Երեւանցի» հրատ., 2005, էջ 463:

³ Նոյն տեղում, էջ 354:

⁴ Նոյն տեղում, էջ 344: